ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

«ՁԳՏՈՒՄ» ավելի լավ ապագայի. համայնքների և քաղաքացիական հասարակության դիմակայունություն Հայաստանում

Իրականացման ժամանակահատված: 01.01.2022 - 30.06.2025

ԱԼԳ երկրներ:

Armenia

ԵՄ ներդրում: € 2 000 000

Ընդհանուր բյուջե: € 2 312 684

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Lead: NEF Belgium, Co-applicant - “WDRCF” Goris Women’s Development Resource Center Foundation;, Co-applicant - “YCCD” Youth Cooperation Center of

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հասցեներ: facebook.com/striveforbetterfuture/

Նախագծի կայքէջ: strive4future.am/

Նախագծի նկարագրություն:

«ՁԳՏՈՒՄ» ավելի լավ ապագայի. համայնքների և քաղաքացիական հասարակության դիմակայունություն Հայաստանում» (STRIVE) ծրագրի նպատակն է բարելավել հայաստանյան ՔՀԿ-ների դիմակայունությունը, հաշվետվողականությունը, գործունեության կայունությունը և նորարարության կարողությունները։
Ծրագրի արդյունքում հայաստանյան ՔՀԿ-ները կունենան առանցքային դերակատարում հանրային իրազեկման, ժողովրդավարության ամրապնդման և հայաստանյան բնակչության, մասնավորապես խոցելի խմբերի, կարիքների սպասարկման հարցում։

Ակնկալվող արդյունքներ:

Խնդիր 1.1. Զարգացնել ՔՀԿ-ների և զանգվածային սոցիալական ու էկոլոգիական քաղաքացիական խմբերի հմտությունները և կազմակերպչական կարողությունները՝ ներգրավելով վերոհիշյալներին կարողությունների զարգացման նորարարարական գործընթացների մեջ, ինչպես նաև նպաստելով ձեռք բերած գիտելիքների կիրառմանը առօրյա գործունեության և զանգվածային քաղաքացիական նախաձեռնությունների մեջ։ (Թիրախ)։ 176 ՔՀԿ օգտվում են նորարարական կարողությունների զարգացման, նպատակային ֆինանսական աջակցության հնարավորություններից, և մենթորային ցիկլերից; 24 քաղաքացիական նախաձեռնողական խմբերը օգտվում են ֆինասական աջակցության հնարավորություններից իրենց սոցիալական նորարարական գործունեության իրականացման համար; 250 ոչ ֆորմալ քաղաքացիական խումբ իրականացում են սոցիալական նորարարական ծրագրեր; 1 ՔՀԿ-ների կարիքների և բացերի մասնակցային քարտեզագրում; 1 նոր կրթական OMI ծրագիր; Ոչ-ֆորմալ կրթություն տրամադրող կազմակերպությունների համար դասընթացի ծրագրի մշակում OMI-ի մեջ կարողությունների զարգացման նպատակով; ստանդարտ ընթացակարգերի մշակում ՔՀԿ-ի կողմից իրականացվող մենթորային ցիկլերի համար; 1 դասընթացի ծրագիր քաղաքացիական գործողության ուղղվածություն ունեցող սոցիալան նորարարության համար։
Խնդիր 1.2. Տեղական ՔՀԿ-ների միջոցով արձագանքել խիստ խոցելի վիճակում գտնվող անձանց հրատապ և հիմնական կարիքներին ՝ օգտագործելով արտակարգ իրավիճակով պայմանավորված ազդեցությունը մեղմելուն հատկացված ֆինանսական միջոցները և կիրառելով «Չվնասել» սկզբունքը։